ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2021թ. N 312-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ N 10/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 3-ի N 19 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2021 թվականի օգոստոսի 3-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 10/5 հասցեում գտնվող 10-002-0024-0200 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 442,1 (չորս հարյուր քառասուներկու հազար մեկ տասնորդական) քմ օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 3-ի N 19 արձանագրությունը՝ N 1 լոտով աճուրդի հանված 10-002-0024-0200 կադաստրային ծածկագրով հողամասը 985 000 (ինը հարյուր ութսունհինգ հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, ***գնորդ Կամո Ռևիկի Մելքոնյանին:***

2. ***Կամո Ռևիկի Մելքոնյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

3 օգոստոսի 2021թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2021թ. N 313-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 14-ի «Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղում գտնվող 10-027-0014-0007 կադաստրային ծածկագրով հողամասին հասցե տրամադրելու մասին» N 283-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «0,3» թիվը փոխարինել «0,49302» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 օգոստոսի 2021թ. N 314-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման ևսպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Մեխակ Աշոտի Զազյանի դիմումները (մտից N 107՝ 25.01.2021 թ. և N 1183՝ 29.07.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝2021 թվականի հուլիսի 28-ի N 28072021-10-0005 վկայական) Ջերմուկ քաղաքի Ջիբվանու փողոցի N3 հասցեում գտնվող 24,35 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը (արտաքին մակերեսը՝ 30,39 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 100 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Մեխակ Աշոտի Զազյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում
   3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) բնակելի տան 1 քառակուսի մետրի համար՝ 3900 (երեք հազար իննը հարյուր) դրամ (տարածագնահատման 13-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.13)

2)առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 1242 (հազար երկու հարյուր քառասուներկու) դրամ:

4. Մեխակ Աշոտի Ջազյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 118525 (հարյուր տասնութ հազար հինգ հարյուր քսանհինգ) դրամ՝ բնակելի տան գինը

2)համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝ 124 200 (հարյուր քսանչորս հազար երկու հարյուր) դրամ՝ հողամասի գինը:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մեխակ Աշոտի Ջազյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեխակ Աշոտի Ջազյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 3
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2021թ. N 315-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 79-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Ռոբերտ Խաչատրյանի՝ ս/թ օգոստոսի 4-ի հայտը (մտից N 1205, 04.08.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Ռոբերտ Խաչատրյանին տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 35 հասցեում գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0033-0005) վրա բնակելի տուն կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Ռոբերտ Խաչատրյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոբերտ Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2021թ. N 316-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՐԴԻԹԵՐ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վարդիթեր Միսակյանի դիմումը (մտից՝ N 1154, 23.07.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 24 շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ 24-րդ շենք, թիվ 21 բնակարան, ճշտման նպատակով տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց, 24-րդ շենք, N 21 բնակարան:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2021թ. N 317-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԳՈՌ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ, ԴԱՎԻԹ, ԱՆՆԱ ԵՎ ԱԼԵՆ ԱՐՍԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄՔՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2–րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետը և Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 03.08.2021 թվականի թիվ 11 արձանագրությունն ու Միասնական սոցիալական ծառայության Ջերմուկի տարածքային կենտրոնի կողմից 28.07.2021թ. ներկայացված դրական եզրակացությունը (մտից N 1193, 02.08.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչներ Գոռ Արսենի Հարությունյանի (ծնված 22.03.2011 թ.), Դավիթ Արսենի Հարությունյանի (ծնված 25.08.2012 թ.), Աննա Արսենի Հարությունյանի (ծնված 28.03.2016 թ.) և Ալեն Արսենի Հարությունյանի (ծնված 05.03.2018 թ.) հետագա խնամքն ու դաստիարակությունը ժամանակավորապես կազմակերպել մանկական խնամքի շուրջօրյա հաստատությունում՝ ելնելով ընտանիքի ծանր սոցիալական վիճակից, ծնողավարման հմտությունների բացակայությունից, հիմք ընդունելով ծնողների համաձայնությունը:

2. Միջնորդությամբ հանդես գալու խնդրանքով դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետին երեխաների հետ միասին նաև նրանց մորը՝ Գայանե Արամայիսի Հարությունյանին տեղափոխելու սույն որոշման 1-ին կետում նշված հաստատությունում՝ վերջինիս կողմից կենցաղավարման և ծնողավարման հմտություններ ձեռք բերելու ակնկալիքով:

3. Համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (սոցիալական աշխատանքի պարտականությունները կատարող) Անուշ Առաքելյանին՝ կազմակերպել սույն որոշման կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2021թ. N 318-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԵՎՈՒՇ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 79-Ն որոշման, հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Արևուշ Հովսեփյանի դիմում-հայտը (մտից՝ 1204, 2021 թվականի օգոստոսի 4) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արևուշ Հովսեփյանին տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 10):

2. Արևուշ Հովսեփյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արևուշ Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2021թ. N 319-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՄՍՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 79-Ն որոշման, հիմք ընդունելով Ա/Ձ Սամսոն Մանուկյանի հայտը (մտից՝ N 1194, 2021 թվականի օգոստոսի 2)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ա/Ձ Սամսոն Մանուկյանին 2021 թվականի օգոստոս–դեկտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցը N 7 հասցեում գտնվող օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (Թույլտվություն N 8):

2. Ա/Ձ Սամսոն Մանուկյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031435 հաշվեհամարին գործունեության ընթացքի յուրաքանչյուր եռամսյակի համար վճարելու տեղական տուրք՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Սամսոն Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2021թ. N 320-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 44,9 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Երվանդ Վիլիսոնի Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 21-ի N 68)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 44,9 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 44,9 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 37,9 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 5-րդ փողոց N 12/1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Երվանդ Վիլիսոնի Սարգսյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 օգոստոսի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 օգոստոսի 2021թ. N 321-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 258-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 266-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիման վրա՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 23-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 9-ի N 92-Ա և 2021 թվականի փետրվարի 10-ի N 95-Ա որոշումների մեջ լրացում կատարելու մասին» N 258-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հղման մեջ «1-ին մասի 2-րդ կետին» բառերը փոխարինել «3-րդ մասին» բառերով,

2) որոշման 1-ին և 2-րդ կետերում «2020» թիվը փոխարինել «2021» թվով:

2. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 29-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 266-Ա որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ *«Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը որպես առանձին միավոր ճանաչելու, համայնքային սեփականություն գրանցելու և հասցե տրամադրելու մասին»:*

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 օգոստոսի 2021թ. N 322-Ա

ՋՈՀՎԱԾ Ա. Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԺԱՌԱՆԳՆԵՐ ՏԻԳՐԱՆ ԵՎ ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՈՍԿՅԱ ԶԱՐԴԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչներ Տիգրան և Լևոն Արթուրի Մարտիրոսյանների մոր՝ Սերինե Ազատի Սիմոնյանի դիմումը (մտից N 1197, 02.08.2021 թ.) և Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 4-ի թիվ 12 եզրակացությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել Սերինե Ազատի Սիմոնյանին (անձնագիր՝ AS 0278762, տրված՝ 13.07.2018 թ. 035-ի կողմից, ծնված՝ 15.06.1991 թ., հաշվառված՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ, շենք 20, բնակարան N 26) ստանալու և տնօրինելու իր անչափահաս որդիներին՝ 44-օրյա պատերազմում զոհված Արթուր Լևոնի Մարտիրոսյանի ժառանգներ Լևոն Արթուրի Մարտիրոսյանին (ծնված՝ 04.04.2014 թ., ՀԾՀ՝ 1424140684, ծննդյան վկայական՝ ԱԲ 323380, տրված՝ 28.04.2014 թ.-ին) և Տիգրան Արթուրի Մարտիրոսյանին (ծնված՝ 17.07.2018 թ., ՀԾՀ՝ 2727180772, ծննդյան վկայական՝ ԲԱ 338607, տրված՝ 25.12.2020 թ.-ին) ժառանգության իրավունքով պատկանող՝ վարկային պայմանագրով «Արդշինբանկ» և «ՎՏԲ–Հայաստան Բանկ» ՓԲԸ–ներում գրավադրված ոսկյա զարդերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերինե Ազատի Սիմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2021թ. N 323-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչագան Զազյանի դիմումները (մտից N 148՝ 26.01.2021 թ. և N 1191՝ 30.07.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 20-ի N 20072021-10-0019 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի 1-ին նրբանցքի N 12 հասցեում գտնվող 40,12 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 42,87 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 42,87 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչագան Զազյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11)

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Վաչագան Զազյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 47157 (քառասունյոթ հազար հարյուր հիսունյոթ) դրամ՝ ավտոտնակի գինը

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝34725 (երեսունչորս հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամ՝ հողամասի գինը

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վաչագան Զազյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վաչագան Զազյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2021թ. N 324-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 1/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Հրաչիկ Առուստամյանի դիմումները (մտից N 147՝ 26.01.2021 թ. և N 1213՝ 05.05.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝2021 թվականի հուլիսի 20-ի N 20072021-10-0017 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի N 1/13 հասցեում գտնվող 32,27 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տունը (արտաքին մակերեսը՝ 34,22 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 34,22 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Հրաչիկ Առուստամյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ
   1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
   2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) բնակելի տան 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11)

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝810 (ութ հարյուր տասը) դրամ:

4. Հրաչիկ Առուստամյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 37650 (երեսունյոթ հազար վեց հարյուր հիսուն) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝27720 (քսանյոթ հազար յոթ հարյուր քսան) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հրաչիկ Առուստամյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հրաչիկ Առուստամյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 օգոստոսի 2021թ. N 325-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑ N 1/46 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն) 7-րդ հոդվածի 8-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Ջերմուկ համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի վարչական տարածքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցները և դրանց պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը գնման նախապատվության իրավունքով կառույցն իրականացրած անձանց ուղղակի վաճառքի ձևով օտարելուն համաձայնություն տալու մասին» N 71-Ա որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Նորայր Պողոսյանի դիմումները (մտից N 137՝ 26.01.2021 թ. և N 1203՝ 04.08.2021 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի հուլիսի 20-ի N 20072021-10-0021 վկայական) Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոց N 1/46 հասցեում գտնվող 45 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը (արտաքին մակերեսը՝ 51,26 քմ) և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 51,26 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Գնդեվազ գյուղի բնակիչ Նորայր Պողոսյանին:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով՝

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11)

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:

4. Նորայր Պողոսյանը պարտավոր է վճարել՝

1) համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին՝ 56400 (հիսունվեց հազար չորս հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը

2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝41525 (քառասունմեկ հազար հինգ հարյուր քսանհինգ) դրամ՝ հողամասի գինը

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Նորայր Պողոսյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նորայր Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 օգոստոսի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2021թ. N 326-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԵՆՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 79-Ն որոշման, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Հենրիկ Սարգսյանի՝ ս/թ օգոստոսի 10-ի հայտը (մտից N 1229, 10.08.2021 թ.)՝ **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Ջերմուկ քաղաքի բնակիչ Հենրիկ Սարգսյանին տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 10/1 հասցեում գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0013-0025) վրա կցակառույց կառուցելու շինարարության թույլտվություն:

2. Հենրիկ Սարգսյանը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հենրիկ Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 11
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 օգոստոսի 2021թ. N 327-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 100,4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչիկ Հրայրի Ղամբարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 26-ի N 125)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 100,4 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 60,637 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 49,68 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց, 1-ին նրբանցք N 1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչիկ Հրայրի Ղամբարյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 օգոստոսի 11
Ջերմուկ